Մրցույթը հիմնվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի <<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում Հանրապետության Նախագահի մրցանակներ հիմնելու մասին>> 2004թ. մայիսի 20-ի ՆԿ-113-Ն կարգադրությամբ: Միջոցառումը անց է կացվել արդեն 11 տարին անընդմեջ:

Հուլիսի 21-27-ը Ծաղկաձորի օլիմպիական գլխավոր մարզահամալիրում տեղի ունեցան մրցույթի եզրափակիչ փուլի մրցումները: Այս տարի մրցույթի նախնական փուլերին մասնակցել է 2067 ընտանիք Հայաստանի Հանրապետությունից և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից: Եզրափակիչ փուլին մասնակցել են նախնական փուլերում հաղթող և մրցանակակիր դարձած 144 թիմ-ընտանիքներ:Մրցույթի եզրափակիչ փուլում այս տարի առաջին անգամ մասնակցել է նաև հաշմանդամ ունեցող 16 ընտանիք՝ Հայաստանի Հանրապետության մարզերից, Երևան քաղաքից և Արցախից:

Մասնակից թիմ-ընտանիքները, ելնելով երեխայի տարիքից, մրցել են 4 տարիքային խմբերում՝

- ***1-ին տարիքային խումբ՝*** 2006 - 2008 թթ. ծնված երեխա ունեցող ընտանիքներ.
- ***2-րդ տարիքային խումբ՝*** 2003 - 2005 թթ. ծնված երեխա ունեցող ընտանիքներ.
- ***3-րդ տարիքային խումբ՝*** 2000 - 2002 թթ. ծնված երեխա ունեցող ընտանիքներ,
- ***4-րդ տարիքային խումբ՝*** 1998 - 1999 թթ. ծնված երեխա ունեցող ընտանիքներ:

Թիմ-ընտանիքի կազմը 3 մարդ՝ ընտանիքի հայրը, մայրը և երեխան՝ անկախ սեռից:

Մրցույթի ծրագրում ընդգրկված մրցաձևերը՝

1.Խաղային փոխանցումավազք՝ 30 մ, **2**.Վարժություն բասկետբոլի գնդակով, **3.**Պարանի ձգում , **4**.Խաղային փոխանցումավազք՝ թենիսի գնդակներով, 5.Հեռացատկ՝ տեղից, 6.Խաղային փոխանցումավազք 80 մ և 7.Հրաձգություն՝ օդամղիչ հրացանով:

Միջոցառմանը Շիրակի մարզը ներկայացրել են 13 թիմ-ընտանիքներ, որոնցից 7-ը՝ Գյումրիից, 2-ը՝ Արթիկից, 3-ը Ախուրյանից և 1-ը Առափիից:

Մրցույթի ընդհանուր թիմային հաշվարկ՝ 1-ին տեղ՝ Երևան,
2-րդ տեղ՝ Շիրակի մարզ,
3-րդ տեղ՝ Կոտայքի մարզ:

Շիրակի մարզի թիմ-ընտանիքների ձեռքբերումները՝

Թիմ-ընտանիքների մրցապայքար՝

Ախուրյանից՝ <<Գեղամյաններ>> - 1-ին տեղ /2-րդ տարիքային խումբ/,
Գյումրիից՝ <<Ալեքսանյաններ>> - 2-րդ տեղ /3-րդ տարիքային խումբ/,

Մրցապայքար առանձին մրցաձևերից՝

Ախուրյանից՝ <<Գեղամյաններ>> - 1-ին տեղ /4 մրցաձևից,2-րդ տարիքային խումբ/,
Գյումրիից՝ <<Ջուհարյաններ>> - 1-ին տեղ / 1-ին տարիքային խումբ/,
Գյումրիից՝ <<Ստեփանյաններ>> - 2-րդ տեղ /2-րդ տարիքային խումբ/,
Ախուրյանից՝ <<Գեղամյաններ>> - 2-րդ տեղ /2-րդ տարիքային խումբ/,
Գյումրիից՝ <<Ղազարյաններ>> - 3-րդ տեղ /3-րդ տարիքային խումբ/,